

Հայկազ Ժ. Հովհաննիսյան
Պատմ. գիտ. դոկտոր

ՀԱՅՏՆԻ ԲԱՐԵՐԱՐԻ ԱՆՀԱՅՏ ԳՈՐԾԵՐԸ

Ուշագրավ վկայություններ Ալեքսանդր Թաիրյանի մասին՝
Ալեքսանդր Երիցյանի արխիվից*

Բանալի բառեր – Ալեքսանդր Թաիրյան, բարերար, կրթամշակութային ոլորտ, հոգևոր ոլորտ, եկեղեցաշինություն, հասարակական գործունեություն, գաղթականներ, օգնություն, քննարկում:

Մուտք

Հայագգի մեծ բարերար Ալեքսանդր Թաիրյանի (1815–1889) ծավալած գործունեությունը գրեթե անհայտ է հայ գիտական շրջանակների: Նրա մասին միայն կցկտուր տեղեկություններ են հրապարակվել, որոնք, անշուշտ, չեն լուսաբանում նրա բազմաբեղուն գործունեությունը: Ալեքսանդր Թաիրյանի անունը նույնիսկ տեղ չի գտել հայկական նախկին ու ներկա հանրագիտարաններում, մինչդեռ անվիճելի է 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարասկզբի հայ հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքում նրա ունեցած լուրջ ազդեցությունը:

Պալատական խորհրդական, արդյունաբերող, բարերար Ալեքսանդր Լազարևիչ (Ղազարի) Թաիրովը (Թաիրյան) ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը և 1831 թ. ապրիլին նշանակվել նույն դպրոցի նախապարտասարական դասարանի ռուսաց լեզվի ուսուցիչ: 1833 թ. եղել է Նախիջևանի գավառական դատարանի գործավարը: 1834-1838 թթ. կատարել է թարգման-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 26.04.2023:

չի պարպականություններ նախ Շարուրի, այնուհետև (1835 թ.)՝ Երևանի գավառապետների մոտ, իսկ 1838 թ.՝ Հայկական մարզի վարչությունում: Մի կարճ ժամանակ՝ 1839-1840 թթ., վարել է Էջմիածնի Մինողի փոխտեսական գործերի կառավարչի (էկզեկուտորի) պաշտոնը: 1840 թվականից սկսած՝ փարբեր պաշտոններ է զբաղեցրել պետական կառույցներում. նույն թվականին ծառայության է անցել Վրաց-իմերեթական նահանգի պետական ունեցվածքի վարչությունում, 1844-1849 թթ. եղել է Թիֆլիսում մասնավոր կարգադրիչ: 1853-1856 թթ. Ղրիմի պարերազմում իրականացրել է ռուսական բանակի պարենի մատակարարումը:

Ալեքսանդր Թաիրյանը նաև հմուտ գործարար էր. Թիֆլիսի առևտրային բանկի հիմնադիրներից էր, Թիֆլիսի և Վլադիկավկազի մի քանի գինեգործական, ճարպի պարրասպան գործարանների համասեփականատերը: Նա նաև հայրնի բարերար էր. ծավալել է լուսավորական լայն գործունեություն, եղել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի պատվավոր հոգաբարձուն, ֆինանսավորել է Կոջոր գյուղի հայկական եկեղեցու կառուցումը, ձեռնարկել է Օշականի և Էջմիածնի եկեղեցիների վերանորոգումը և այլն: Պարզևարովել է Սուրբ Աննայի 2-րդ և 3-րդ, Սուրբ Սրբանիստավի 2-րդ և Սուրբ Վլադիմիրի 4-րդ սարիճանների շքանշաններով:

Անուսնացած էր Եկաբերինա Զուրարովնա Մելիքովայի հետ: Նրանք ունեցել են երկու որդի՝ Հովհաննեսը (Իվան) և Զրիստափորը, և չորս դուստր՝ Մարիան, Եֆիմիան, Աննան և Հռիփսիմեն¹: Ալեքսանդր Թաիրյանն իր վերջին հանգրվանն է գրել 1889 թվականին Թիֆլիսի մերձակա Կոջոր գյուղ-ամառանոցի գերեզմանատանը:

Մատենադարանում հայ մեծանուն գիտնական Ալեքսանդր Երիցյանի արխիվն ուսումնասիրելու ընթացքում հանդիպեցինք Ալեքսանդր Թաիրյանի գործունեությունը լուսաբանող բազում վավերագրերի: Հետագայում մեծանուն գիտնականի արխիվում մեր ձեռքն ընկավ ևս մի վավերագիր, որից տեղեկացանք Ալ. Թաիրյանի գրասենյակի գործերն ու արխիվը համակարգելու՝ Ալ. Երիցյանի տված համաձայնության մասին²: Հենց դրանով պետք է բացատրել Ալ. Թաիրյանի գործունեությունը լուսաբանող փաստաթղթերի առատությունը Ալ. Երիցյանի արխիվում: Մեր հայտնաբերած՝ Ալ. Թաիրյանի գործունեությունը լուսաբանող վավերագրերն ամբողջությամբ նորույթ են, որոնք թույլ են տալիս կատարել ավելի լայն ընդհանրացումներ և եզրակացություններ:

1 Տես Российский Государственный Исторический Архив (РГИА), ф. 1343, оп. 30, д. 30, л. 19-20:
2 Տես Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 153, վավ. 1, թ. 1:

1. Ալ. Թաիրյանի գործունեությունը կրթամշակութային ոլորտում

Հայտնի է, որ 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին Անդրկովկասում վերելք ապրող հայ ունևոր դասի գործունեության կարևոր բնագավառներից մեկը կրթալուսավորական ոլորտն էր: Ալ. Թաիրյանը ևս բացառություն չէր: Բազմաթիվ են Ալ. Երիցյանի արխիվում պահվող փաստաթղթերը, որոնք վկայում են Ալ. Թաիրյանի՝ այս կամ այն կրթական հաստատությանը ցուցաբերած ֆինանսական օգնության մասին: Ընդ որում, Ալ. Թաիրյանը ոչ միայն գումար է փոխանցել, այլև անմիջական մասնակցություն է ունեցել կրթօջախների կառավարման գործում: Այն փաստը, որ նա երկար տարիներ եղել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի հոգաբարձուների խորհրդի անդամ, ասվածի վկայությունն է: Իհարկե, նման նշանավոր դպրոցի հոգաբարձուների խորհրդի կազմում ընդգրկվելը պատահական չէր. հաստատությունն ակնկալել է նրա անմիջական մասնակցությունն ու աջակցությունը կրթօջախի ֆինանսական խնդիրների լուծման գործում: Ինչպես փաստում են արխիվային վավերագրերը, դրանում ամենից առաջ Ալ. Թաիրյանն ինքն էր նախանձախնդիր, ուստիև խիստ կարևորում էր իր մասնակցությունն այդ գործին: Այսպես՝ 1859 թ. Վիրահայոց թեմի առաջնորդ Սարգիս Զալալյան արքեպիսկոպոսին գրած նամակում նա կարծիք էր հայտնում Ներսիսյան դպրոցի հոգաբարձության դրամական հաշիվները ստուգելու, հոգաբարձուներին փոխելու վերաբերյալ հայոց կաթողիկոս Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցու (1858-1865) կոնդակի մասին: Վեց էջանոց նամակում Ալ. Թաիրյանը մանրամասն ներկայացնում էր Ներսիսյան դպրոցի հոգսերն ու իր նկատած թերությունները: Ամենից առաջ նա զարմացած էր Ներսիսյան դպրոցի հանդեպ էջմիածնի Սինոդի անտարբեր վերաբերմունքից. «Զարմացք պատեն զիս և զընկերակիցս իմ թէ որպէս մինչև ցայժմ սինօդն չէ առաջի արարեալ ի գիտութիւն նորին վեհափառութեան զիսկական սուրբ կոնդակս սրբալոյս Ներսեսի տուեալս հոգաբարձութեան ըստ գերագոյն ազգային գործոյ, որ վասն մերոյս ուսումնարանի...»³: Ուշագրավ է, որ, խոսելով ու-

3 Նույն տեղում, թղթ. 150, վավ. 48, թ. 1:

սումնական հաստատությանը նվիրաբերություն կատարած անձանց շուրջ ժողովրդի մեջ ծագած կասկածների մասին, Ալ. Թաիրյանը գտնում էր, որ դրանք տեղին չէին, քանի որ եթե այդպես լիներ, ապա անիմաստ կլիներ խոսել բարեգործության մասին ընդհանրապես: «...մենք օգևորյալ հաւատովն սրբոց հայրենասիրաց նահատական նահատակութիւնս յանձն առցուք և պահպանեսցուք զուսումնարանն մեր ըստ ուսման է երկրորդ ծնող ին»⁴, - հավաստիացնում էր Ալ. Թաիրյանը: Նույն մտահոգությունն արտահայտված է նաև Մինդի դատախազ Հովհաննես Միրաքյանին հասցեագրված նամակում, որում նա կրկին գնահատում է հոգաբարձուների գործունեությունը, խոսում ուսումնարանին առնչվող խնդիրների մասին. «Ինչպես հայտնի է,- գրում է Ալ. Թաիրյանը,- մենք հոգաբարձուների պարտականությունը ընդունել ենք բացառապես ազգային օգտակարությանը ջանադիր լինելու նպատակով, սակայն ոչ այնպիսի ձևականության համար»⁵: Այստեղ էլ Ալ. Թաիրյանը կարծես թե վիրավորված էր իրենց հանդեպ ցուցաբերված վերաբերմունքից. «Դուք ավելի լավ գիտեք, թե մենք ինչպես ենք ծառայում և ծառայել ենք մեր ուսումնարանի բարօրության համար, ուստի հակառակ կլինի աստծուն և մեր խղճին սոռանալ այս ծառայությունները,- շարունակում էր Թաիրյանը,- մեր մյուս հավատակիցների կողմից, ինչը վրդովեցնում է մեզ... Նորընտիր կաթողիկոսը թող քննության առնի մեր գործողությունները ուսումնարանի կառավարման հարցում»⁶:

Հետագայում ևս Ալ. Թաիրյանն արձագանքել է Ներսիսյան դպրոցի գործունեության համար կարևորություն ներկայացնող հարցերի քննարկմանը, թեպետ 1862 թ. Մատթեոս կաթողիկոսին գրած նամակում բարերարը տրտնջում էր, որ հոգաբարձուների խորհրդի առանձին անդամներ կողմնակալ վերաբերմունք ունեին իր անձի հանդեպ: Ավելին՝ նա բողոքում էր հոգաբարձուների նորընտիր խորհրդի որոշ անդամների խառնակչական վարքից և իր անձի դեմ կազմակերպած խարդավանքներից ու տարածած բամբասանքներից. «...տեղեակ լինեք թէ այս նոր հոգաբարձուք առանց իրիք զգալոց զաշխատանս մեր անարժանաբար բամբասելին զմեզ ու այս ոչ թէ

4 Նույն տեղում:

5 Նույն տեղում, վավ. 84, թ. 1: Այս եւ հաջորդ մեջբերումներում կարող են հանդիպել արդի ուղղագրությանը դարձվածքներ, քանի որ դրանք ռուսերենից թարգմանվածներ են: Խմբ:

6 Նույն տեղում, թ. 2:

գոնեայ մասնիկաւ արտաքուստ, այլ ամենայն ատելութեամբ...»⁷: Ալ. Թաիրյանը նշում էր նաև այդ վերաբերմունքի պատճառը. «...Սարգիս, որ էր գլխաւոր պատճառ ընտրութեամբ Ձերոյ ի հայրապետական...»⁸:

Ինչպէս ցույց են տալիս արխիվային վավերագրերը, Թաիրյանը չի բավականացել միայն ֆինանսական աջակցություն ցուցաբերելով. նա կրթադաստիարակչական խնդիրների շուրջ նաև հողվածներ է գրել: Արխիվային պրպտումների ընթացքում մենք հայտնաբերեցինք Ալ. Թաիրյանի՝ 1869 թ. հոկտեմբերի 12-ին գրված մի հողված, որը նախատեսված էր «Հայկական աշխարհ» թերթի համար: Հողվածի համար նյութ էր ծառայել Ներսիսյան դպրոցում հայ մեկ այլ մեծանուն գործչի՝ Ստեփանոս Նազարյանցի ելույթը, որը քննադատության էր արժանացել Ալ. Թաիրյանի կողմից: «Արդէն Ձեզ ևս իբրև ճշմարտաքարոզ խմբագրի և Հայոց Ներսիսեան հոգևոր դպրոցի ներքին և արտաքին, անցեալ և ներկայ հանգամանացը տեղեակ անձի յայտնի կլինի այն տեսրակը, որ քաղաքումս հրատարակուեցաւ այս տարի այսօրինակ վերտառութեամբ՝ «Դասախօսութիւն և համարատուութիւն Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի հանդիսաւոր գործողութեան մէջ»: Միայն մի քանի խօսք կամենում եմ խօսել մեծապատիւ Ստեփաննոս Նազարեանցի դասախօսութեան մէջ պարունակուած անորոշ քարածգութիւնների վրայ՝ խնդրելով նորա ներողամտութիւնը, նախընթացաբար յայտնելով, որ Ստ. Նազարեանցը, ներկայ չլինելով ուսումնարանի անցեալ անցքերին, վեր է առել իր բամբասանաց նիւթը ապականեալ աղբիւրներից...»⁹, - գրում էր Ալ. Թաիրյանը: Ձենք կարող չնկատել, որ հայ մեծանուն գործիչները, մեղմ ասած, թերացել են միմյանց հանդէպ հանդուրժողականություն ցուցաբերելու հարցում:

7 Նույն տեղում, վավ. 176, թ. 1:

8 Նույն տեղում:

9 Նույն տեղում, վավ. 94, թ. 1:

2. Ալ. Թաիրյանի ներկայությունը եկեղեցական գործերում

Ալ. Երիցյանի արխիվում պահվող վավերագրերը վկայում են նաև թիֆլիսահայության հոգևոր կյանքում Ալ. Թաիրյանի ունեցած մեծ ազդեցության մասին: Նա առանձնապես ուշադիր էր Վիրահայոց թեմի առաջնորդների առաջադրման ու նշանակման, հոգևորականների սատարելու, ինչու չէ, նաև մի քանիսին հոգևոր ծառայությունից հեռացնելու հարցերում: Իհարկե, ասվածը չպետք է ընկալել որպես հայոց հոգևոր գործերին խառնվելու իրողություն, այլ մտահոգություն վիրահայության հոգևոր հաստատությունների գործունեությունը պատշաճ կերպով ապահովելու խնդրում: Այդ են հաստատում Ալ. Թաիրյանի ձեռամբ գրված բազմաթիվ նամակները բարձրաստիճան հայ հոգևորականներին, Էջմիածնի Սինդի դատախազին, Թիֆլիսի երևելի հայերին: Խնդրի առնչությամբ ուշագրավ մանրամասներ կան, օրինակ, Ստ. Սամուելյանին հասցեագրված Ալ. Թաիրյանի նամակներում: Ստ. Սամուելյանը, ինչպես երևում է Ալ. Երիցյանի արխիվում պահպանված հարուստ նամականից, եղել է թիֆլիսահայ երևելիներից մեկը և շատ հարցերում համագործակցել է Ալ. Թաիրյանի հետ: Խնդիրը վերաբերում էր Սարգիս արքեպիսկոպոս Զալալյանին Վիրահայոց թեմի առաջնորդ կարգելուն: Ինչպես փաստում են Ալ. Երիցյանի արխիվում պահպանվող արխիվային վավերագրերը, Սարգիս Զալալյանի նշանակմանը դեմ են եղել Մայր Աթոռի որոշ բարձրաստիճան հոգևորականներ, իսկ Թաիրյանը, ընդհակառակը, անվերապահորեն սատարել է նրան: Ստ. Սամուելյանը հայտնում էր, որ խնդրի առնչությամբ հանդիպումներ է ունեցել Թիֆլիսի նահանգապետի, կաթողիկոսի և Սարգիս արքեպիսկոպոսի հետ, և արքեպիսկոպոսին Թիֆլիս վերադարձնելու համար Մատթեոս կաթողիկոսը սպասում էր տեղի ժողովրդի պահանջին: Բնավ չենք բացառում, որ նման տեսակցությունները Ալ. Թաիրյանի խնդրանքի արդյունք էին: Ավելին, ինչպես հաղորդում է Ստ. Սամուելյանը, Սրբազանն անձամբ խնդրել էր, որ այդ գործը կազմակերպեր ինքը՝ Ալ. Թաիրյանը. «...որ ինքն գրի Ձեզ, որ Դուք այս տեղից բազմաստորագիր հանրագիր կամ գոնեայ ի բնակչաց քաղաքի խնդիրք դրկէք Վեհին իբր թէ Վեհն ասացեալ և ուրիշ ճար չունի յետ ստացելոյ, բայց եթէ

այս որ ժողովրդենէ կրկին ուզելը...»¹⁰: Բնականաբար, հարցն այդ կերպ կարգավորելը խնդիր չէր Ալ. Թաիրյանի համար: Ուստի օգտագործելով թիֆլիսահայերի շրջանում իր ունեցած ազդեցությունը՝ նա հասավ այն բանին, որ կաթողիկոսի պահանջած խնդրագիրն անմիջապես գրվեց: Դա հաստատվում է 1862 թ. հունվարին Ալ. Թաիրյանին ուղղված Սարգիս արքեպիսկոպոսի նամակում: Արքեպիսկոպոսը հայտնում էր, որ իրեն առաջնորդ նշանակելու խնդրագիրը պատրաստ է, և կաթողիկոսն ի վերջո տվել է իր «հաճությունը իրեն Թիֆլիս վերադառնալու համար», ուստի նա շտապել էր նաև արտահայտելու իր շնորհապարտությունը Ալ. Թաիրյանին. «Զգիր ցանկալվոյդ ընկալայ ուրախութեամբ հոգւոյ և խնդամ ի վերայ խրախուսանաց ձերոց վասն մնալոյ իմ անտրտում առանց վհատանաց իմդ ցանկալի Աղեքսանդրէ, ուստի գիտես, թե ես կնատ և փոքրոգի ոմն եմ զի չկարիցեմ տանել զծաղրական հարուցած բախտին կամ զպոռոտախօս շաղփախփանս անմիտ և ցանցառ արանց»¹¹: Մակայն նամակում Սարգիս արքեպիսկոպոսը հայտնում էր նաև, որ կաթողիկոսը, չնայած այդ ամենին, շարունակում է «տատանողական դրութիւն ցուցաբերել», իր վրա բարդել է նոր մեղադրանքներ, և ինքը ենթարկվում է հետապնդման (իր բառերով՝ «բանտարկեալի դրութեան»¹²): Ավելին, կարծես վիրավորված այդ վերաբերմունքից, նա հայտնում էր, որ հրաժարվում է մեկնել Աստրախան, քանզի «լաւ կհամարիմ նստիլ ի Մանահին ոչ ասէ, անդ մերձ ես Տփլիսոյ և ժողովուրդ քաղաքին մեծամածք ամենայն զքեզ սիրեն...»¹³:

Մի կողմ թողնելով Սարգիս արքեպիսկոպոսի հաստատման առնչությամբ ծագած խնդիրները՝ ուշադրություն դարձնենք արքեպիսկոպոսի վերջին ընդգծման վրա՝ «Տփլիսոյ և ժողովուրդ քաղաքին մեծամածք ամենայն զքեզ սիրեն»: Մեկ այլ նամակում էլ, որպես աջակցություն Թաիրյանին, Սարգիս արքեպիսկոպոսը նշում էր, որ չի դադարի «ուսումնարանի բարօրութեան համար պայքարելուց՝ չնայած կաթողիկոսի կողմից իրեն տրուած բանտարկեալի դրութեան»¹⁴:

Վավերագրին անմիջապես հաջորդում է Ալ. Թաիրյանին ուղղված Ստ. Սամուելյանի 1862 թ. հունվարի 20-ի նամակը, որում

10 Նույն տեղում, վավ. 174, թ. 1:

11 Նույն տեղում, թղթ. 154, վավ. 179, թ. 1:

12 Նույն տեղում:

13 Նույն տեղում, թ. 2:

14 Նույն տեղում, վավ. 178, թ. 1:

Սամուելյանը հայտնում էր կաթողիկոսի և Սարգիս արքեպիսկոպոսի հարաբերությունների բարելավման և այն մասին, որ շուտով վերջինս ուղևորվելու է Թիֆլիս՝ պաշտոնավարելու¹⁵: Իսկ թե ինչպես էր Ալ. Թաիրյանը հասել Սարգիս արքեպիսկոպոսի համար կաթողիկոսին ուղղված թիֆլիսահայերի խնդրագրի կազմմանը, երևում է հենց Սարգիս արքեպիսկոպոսի՝ 1862 թ. հունվարի 29-ին Թիֆլիսի համքարներին ու համքարապետերին ուղղած նամակից, որով արքեպիսկոպոսն իր երախտագիտությունն էր հայտնում նրանց՝ «բազմաստորագիր խնդրագրի» համար, որով նրանք պահանջել էին իրեն վերադարձնել Թիֆլիս որպես Վիրահայոց թեմի առաջնորդ¹⁶: Պարզից էլ պարզ է, որ այդ «բազմաստորագիր խնդրագիրը կազմելու» գործընթացի ետևում Ալ. Թաիրյանի հեղինակությունն ու անուն են եղել:

Նույն պատմությունն է եղել նաև Սինոդի դատախազի պաշտոնում Գրիգոր Եղիազարյանի նշանակման պարագայում: Ալ. Երիցյանի արխիվում պահպանվել է Գրիգոր Եղիազարյանի նամակը Ալ. Թաիրյանին, որում Գ. Եղիազարյանը խնդրում էր երաշխավորել իրեն «պրոկուրորի» պաշտոնում: Ուշագրավ է, որ Գ. Եղիազարյանն իր այդ ցանկությունը բացատրել է Սարգիս արքեպիսկոպոսին «օգնելու» և անցանկալի մարդկանց «Էջմիածնից հեռացնելու»¹⁷ միտումով: Նա Թաիրյանին ուղղված մեկ այլ նամակում էլ խնդրում էր, որ մտածի նախկին դատախազ Միրաքովին (Հովհաննես Միրաքյանին – Հ. Հ.) Թիֆլիսում աշխատանքով ապահովելու մասին», որպեսզի տեղն ազատվի, և «պաշտոնը մնա իրեն»¹⁸: Ի վերջո, ինչպես փաստում են արխիվային վավերագրերը, Գևորգ Եղիազարյանը նշանակվել է Սինոդի դատախազի պաշտոնում: Մենք, իհարկե, հեռու ենք այն մտքից, որ Ալ. Թաիրյանն այդպես հեշտ ու հանգիստ «անցկացրել է» իր «թեկնածուներին»: Մեր կարծիքով՝ այդ ամենի ետևում կրկին պետք է փնտրել նրա եթե չասենք բացարձակ, ապա բարձր հեղինակությունը և ազդեցությունը հոգևոր ու քաղաքական հարցերի հանգուցալուծման գործում:

15 Տե՛ս նույն տեղում, վավ. 182, թ. 1:

16 Տե՛ս նույն տեղում, վավ. 183, թ. 1:

17 Նույն տեղում, վավ. 193, թ. 1:

18 Տե՛ս նույն տեղում, վավ. 196, թ. 2:

3. Ալ. Թաիրյանի ներդրումը եկեղեցաշինության մեջ

Ինչպես վկայում են արխիվային վավերագրերը, Ալ. Թաիրյանը զգալի միջոցներ է ծախսել եկեղեցաշինության նպատակներով: Ալ. Երիցյանի արխիվում պահպանվել է Ալ. Թաիրյանի և ռուս ճարտարապետ Սերգեյ Գուբնիկովի միջև 1876 թ. հուլիսի 17-ին կնքված մի պայմանագրի բնագիրը, համաձայն որի՝ վերջինս պարտավորվում էր կառուցել Կոջորի հայկական եկեղեցու երկու խորանները, ինչի համար որպես վարձավճար պետք է ստանար 200 ռուբլի¹⁹: Պահպանվել է նաև ստացական, որով հաստատվում է Ալ. Թաիրյանի՝ Շամխորեցոց հայկական եկեղեցուն 1883 թ. կատարած 5 թումանի նվիրաբերության փաստը²⁰:

Մեր ուսումնասիրած արխիվում պահպանվել են բազմաթիվ վկայություններ իր պետական ծառայության 50-ամյակի կապակցությամբ Ալ. Թաիրյանի կատարած նվիրատվությունների մասին: Օրինակ՝ Կովկասի բարեգործական ընկերությունը հավաստագիր-շնորհակալագիր է ուղարկել Ալ. Թաիրյանին՝ «ի յիշատակ իր պետական ծառայութեան 50-ամեակի»²¹ ընկերությանը 50 ռուբլի նվիրաբերելու համար: Կամ՝ «Կովկաս» ռուսալեզու թերթը 1883 թ. հուլիսի 27-ին հաղորդում էր, որ Ալեքսանդր Թաիրյանն իր պետական ծառայության 50-ամյակի առթիվ Թիֆլիսի օրիորդաց գիմնազիային է նվիրաբերել 100 ռուբլի. «Թիֆլիսի նահանգապետից տպագրութեան համար մենք ստացել ենք հետևյալ հաղորդագրությունը. Կոլեգիալ խորհրդական Ալեքսանդր Լազարնիչ Թաիրովը հուլիսի 12-ին իր պետական ծառայութեան 50-ամյակի առթիվ Թիֆլիսի նահանգապետի գրասենյակ է փոխանցել 100 ռուբլի Թիֆլիսի օրիորդաց գիմնազիայի համար. գումարն արդեն փոխանցուել է նշված գիմնազիայի տնօրէնին...»²²:

Անշուշտ, Ալ. Թաիրյանն այս ամենը չի արել իր հայրենակիցների կամ ռուսական իշխանությունների առաջ իր անձը ցուցադրելու համար: Մեզ այս համոզմանն են բերել Ալ. Երիցյանի արխիվում պահպանված՝ հայ հասարակական-քաղաքական գործիչների՝ Ալ. Թաիր-

19 Տե՛ս նույն տեղում, թղթ. 153, վավ. 70:

20 Տե՛ս նույն տեղում, վավ. 73:

21 Նույն տեղում, վավ. 75:

22 Նույն տեղում, վավ. 64:

յանին հասցեագրած գնահատանքի բազում նամակները: Դրանց թվում է թիֆլիսաբնակ Հովհաննես Կուսիկյանի նամակը Ալ. Թաիրյանին (1860 թ. հոկտեմբեր), որում գովաբանվում են նրա ազգասիրական նախաձեռնությունները. «...ի հայրենասէր և ի ճշմարիտ համազգեաց զերևելի անուն, զվաստակ և զհոգատարութիւն Ձեր ի վերայ հայ ազգի... զմեծ իմն բերկրանք վարկայ սակս իմ մտանել ընդ հովանաւորութեամբ ձեզպիսի հայրախնամ և բազմավաստակ հօրն, որ զամենայն հոգին ի գործ դնէք ի բարելաւութեան և ի բարեկեցութեան վիճակի կացուցանել զամենայն ստորադրեալս Ձեր»²³: Այն, որ թիֆլիսահայության կողմից Ալ. Թաիրյանն ընդունվել էր որպէս բարերար, ապացուցելու կարիք չկա. «Բազմերամիտ և քրտնաջան հայր. Լուսեալ հայրենասէր և ճշմարիտ համազգեաց զերևելի անուն, զվաստակ և զհոգատար»²⁴ այսպիսի որակումներով են բնութագրել նրան ժամանակակիցները:

4. Ալ. Թաիրյանի դերակատարությունը հասարակական գործունեության այլ ոլորտներում

Ալ. Երիցյանի արխիվում պահվող վավերագրերի թռուցիկ ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Ալ. Թաիրյանը մեծապէս կարևորել է նաև գյուղական ծխական դպրոցները, որտեղ գրել-կարդալ էին սովորում բազմաթիվ երեխաներ: Շատերը, որպէս կանոն, աշխատում էին աջակցել քաղաքային հաստատություններին, որտեղ «հասարակական համակրանքը» ավելի բարձր ու հասանելի էր: Ալ. Թաիրյանն այն հազվագյուտ բարերարներից էր, որոնք իրենց հայացքն ուղղել էին հայկական գյուղի վրա: Վավերագրերից մեկում կարդում ենք. «25 մարտի 1859 թ.: Մեծ Ղարաքիլիսա գյուղից խնդրանք Ալեքսանդր Լազարեիչին՝ դրամով կամ դպրոցական պարագաներով տեղի ծխական դպրոցին օգնելու համար»²⁵: Նույն գյուղի քահանա և ծխական դպրոցի ուսուցիչ Կարապետ Տեր-Պետրոսյանն էլ իր հերթին բարերարից խնդրել էր «անհրաժեշտ գրքեր ուղարկել»²⁶: Ուշագրավ մեկ այլ գրառում ևս. Սարգիս արք. Ջալալ-

23 Նույն տեղում, թղթ. 150, վավ. 108, թ. 1:

24 Նույն տեղում, վավ. 110, թ. 2:

25 Նույն տեղում, վավ. 87:

26 Նույն տեղում, վավ. 88:

յանը նամակով իր երախտագիտությունն էր հայտնում Ալ. Թաիրյանին՝ տպարան գնելու և Ալեքսանդրապոլում մի շարք աշակերտների իր ծախսով ուսումը շարունակելու առթիվ²⁷:

Հարկ է նշել, որ Ալ. Թաիրյանի գործունեությունը չի սահմանափակվել բացառապես իր ծննդավայր Թիֆլիսով. այն ընդգրկել է հայության ամենատարբեր հատվածները, ինչը հաստատվում է արխիվային վավերագրերով: Այսպես՝ Ալ. Թաիրյանի բարերարության անբաժան մասն է եղել արևմտահայերին ցուցաբերած օգնությունը: Ալ. Երիցյանի արխիվում բազմաթիվ են ստացական-նամակները, որոնք վկայում են արևմտահայության համար Ալ. Թաիրյանի կատարած նվիրատվությունների մասին: Պահպանվել է Մշո Ս. Կարապետ վանքի վանահայր **Մկրտիչ վարդապետ Խրիմյանի** 1868 թ. հուլիսի 1-ի օրհնության գիրը Ալ. Թաիրյանին՝ նրա ուղարկած գումարի համար. «**Յորոց ժամանեալ հասցէ գիրս օրհնութեան եւ պահպանութեան հանդերձ Աստուածախնամ գթութեամբ եւ ողորմութեամբ ի վերայ օրհնեալ եւ սիրելի Աղեքսանդր Թահիրեանց** (ընդգծումը մերն է – Հ. Հ.)»²⁸: Ալ. Երիցյանի արխիվում է նաև Մշո Ս. Կարապետ վանքում պատրիարքական փոխանորդ Գարեգին վարդապետ Սրվանձտյանի օրհնության գիրը Ալ. Թաիրյանին. «**6 յուլիսի 1871 թ.: Եւ ընդ օրհնառաք գրութեանս յայտնի լիցի բարեպաշտութեան ձերում, զի ըստ հրամանի Աստուածային Սուրբ Գրոց պարտիսկ է և արժան ամենայն բարեպաշտ հոգեսիրաց ջերմեռանդն սրտի և բարեպաշտ երկիւղածութեամբ զբաժինս յարդար իւրոց հանել վաստակոց ի պայծառութիւն հրաշափառ սուրբ տեղեաց և վանօրէից....** (ընդգծումը մերն է – Հ. Հ.)»²⁹: Այսինքն՝ Մշո Ս. Կարապետ վանքի կարիքների համար Ալ. Թաիրյանը ամեն տարի նվիրատվություն է կատարել՝ կոնկրետ գումարի տեսքով: Ի հարկե, Ալ. Թաիրյանը ևս որոշ հարցերով դիմել է հայոց եկեղեցու հովվապետերին: Այսպես՝ արխիվային վավերագիրը փաստում է, որ Գևորգ Դ կաթողիկոսը 1879 թ. հոկտեմբերի 10-ի հատուկ կոնդակով հարգել է Ալեքսանդր Թաիրյանի խնդրանքը և ս. Հռիփսիմեի մասունք նվիրել նրա դստերը՝ Հռիփսիմեին, որը կուսակրոնություն էր ուխտել³⁰:

27 Տե՛ս նույն տեղում, վավ. 17:

28 Նույն տեղում, թղթ. 147, վավ. 22, թ. 1:

29 Նույն տեղում, վավ. 23, 24:

30 Տե՛ս նույն տեղում, թղթ. 149, վավ. 134:

Ալ. Երիցյանի արխիվում Ալ. Թաիրյանին ուղղված բազում նամակներ կան Շամախիի թեմակալ առաջնորդ Դանիել արք. Շահնազարյանից, ռուսահայ գաղթօջախների թեմակալ առաջնորդներից և ուրիշներից: Այդ բոլոր նամակներում տեղի հայությանը հուզող հարցերի կարգավորման գործում Ալ. Թաիրյանի մասնակցության խնդրանքներն են: Այսպես՝ Շամախիի թեմակալ առաջնորդ Դանիել արք. Շահնազարյանի՝ Թաիրյանին ուղղած 26 փետրվարի 1866 թ. նամակում տեղեկացվում էր որ Կարապետ Լալայանն (Շամախիի երևելի հայերից – Հ. Հ.) գտնվում է Թիֆլիսում³¹: Օգտագործելով այդ առիթը՝ թեմակալ առաջնորդը խնդրում էր Թաիրյանին, որ հորդորի Կ. Լալայանին իր նման աջակցել կրթական և եկեղեցական գործերում, քանզի «նա մեծահարուստ մարդ է և կարող է շատ բան անել, եթե միայն կամենայ»³²: Նամակի վերջում էլ թեմակալ առաջնորդը հայտնում էր, որ տեղի որոշ չկամների պատճառով ձախողման է մատնվում Շամախու դպրոցի օգտին լինելիք հանգանակության գործը, ուստի ինքը կազմել է տեղի հայկական դպրոցների կանոնադրությունը և ուղարկել է սինոդի հաստատմանը³³: Այսինքն՝ մեկ նամակում Դանիել արք. Շահնազարյանը խնդրահարույց հարցերի մի ամբողջ թնջուկ էր ներկայացնում Ալ. Թաիրյանին՝ ակնկալելով դրանց լուծման գործում հայ բարերարի մասնակցությունն ու աջակցությունը:

Ալ. Թաիրյանի բարեգործական ձեռնարկներից անմասն չի մնացել նաև Ղարաբաղի հայությունը: Այդ են հաստատում Ղարաբաղի թեմակալ առաջնորդությունը ստանձնած Սարգիս արք. Ջալալյանի նամակները³⁴: Ընդ որում, Ալ. Թաիրյանին դիմել են ամենատարբեր հարցերով, օրինակ՝ 1866 թ. մարտի 3-ի նամակում թեմակալ առաջնորդն իր ուրախությունն էր հայտնում առ այն, որ Ստեփանոս քահանան ետ է դարձել իր սխալ ճանապարհից և ուզում է լրագիր հրատարակել³⁵: Մեկ այլ նամակում (8 մայիսի 1866 թ.) Սարգիս արք. Ջալալյանը հայտնում էր Մարտին Լյութերի շարադրած վարդապետությունը սրբագրելուց հետո՝ տպելու կարելիության մասին³⁶: Ահա այսպիսի առօրեական հարցերով նույնիսկ թեմակալ առաջնորդներն են

31 Տե՛ս նույն տեղում, թղթ. 155, վավ. 159:

32 Նույն տեղում:

33 Տե՛ս նույն տեղում:

34 Տե՛ս նույն տեղում, վավ. 25:

35 Տե՛ս նույն տեղում, վավ. 26:

36 Տե՛ս նույն տեղում, վավ. 163:

դիմել Ալ. Թաիրյանին, ինչը մեկ անգամ ևս փաստում է հայության ամենատարբեր շրջանակներում ու հատվածներում վերջինիս մեծ հեղինակության մասին:

Իհարկե, Ալ. Թաիրյանը հետևողական է եղել, թե իր նվիրատվությունները ծառայե՞լ են արդյոք իրենց նպատակին, թե՞ ոչ, ուստի ջանասիրաբար խնդրել է նամակով հայտնել գումարի ստացման մասին: Այսպես՝ արխիվում պահ է տրված Թիֆլիսի աղքատանոցի կոմիտեի հավաստագիրը Ալ. Թաիրյանին առ այն, որ նվիրաբերված 100 ռուբլին տեղ է հասել³⁷: 1883 թ. նոյեմբերին էլ Թաիրյանը նամակով դիմել էր Խրիսյան Հայրիկին՝ խնդրելով տեղեկացնել՝ արդյոք Վանի սովյալների համար իր ուղարկած 500 ռուբլին տեղ հասե՞լ է, թե՞ ոչ³⁸: Նույն թվականով թվագրված մեկ այլ վավերագիր հաստատում է Ալ. Թաիրյանի՝ պատերազմում վիրավորվածներին և հիվանդներին օգնող Թիֆլիսի վարչությանը կատարած նվիրատվության մասին:

Նշել, որ Ալ. Թաիրյանն օժանդակել է որբանոցների հիմնման աշխատանքներին, նշանակում է փաստագրել նրա կատարած բարեգործությունների մի մասը միայն: Նման բովանդակությամբ վավերագրերը ևս բազմաթիվ են Ալ. Երիցյանի արխիվում: Այսպես՝ արխիվային հերթական վավերագիրը փաստում է, որ Ալ. Թաիրյանը «մեծ ցանկությամբ լծվել է» Թիֆլիսի Ալեքսանդր 2-րդի անվան կամ Ադեքսանդրյան որբանոցի հիմնման աշխատանքներին և այդ նպատակով նվիրաբերել է ծանրակշիռ գումար³⁹:

Ալ. Թաիրյանը չի մերժել բարեգործական կազմակերպությունների խնդրանքները և մասնակցել է այս կամ այն դպրոցի հիմնադրման կապակցությամբ հրավիրված ժողովներին, օրինակ՝ Թիֆլիսում Նիկոլասյան դպրոցի հիմնադրման առիթով կազմակերպված ժողովին⁴⁰: Հասկանալի է, որ այդպիսի ժողովները գումարվում էին առաջին հերթին բարերարների մասնակցությամբ, և հայտարարվում էր կրթական ձեռնարկներին օժանդակություն ցուցաբերելու մասին: Մեկ այլ վավերագիր էլ վկայում է Պյատիգորսկի հայկական եկեղե-

37 Տե՛ս նույն տեղում, թղթ. 153, վավ. 68:

38 Տե՛ս նույն տեղում, վավ. 69:

39 Տե՛ս նույն տեղում, վավ. 81:

40 Տե՛ս նույն տեղում, վավ. 83-85:

ցուն Ալ. Թաիրյանի 110 ռուբլու նվիրաբերության մասին⁴¹: Ընդ որում, Ալ. Թաիրյանը նույնպիսի առատաձեռնությամբ նվիրատվություններ է արել նաև վրացական և ռուսական բարեգործական հաստատություններին ու ընկերություններին: Այսպես՝ պահպանված արխիվային վավերագրերից մեկը փաստում է 1883 թ. վրացական Ս. Նինոյի բարեգործական ընկերությանը Ալ. Թաիրյանի 100 ռուբլու նվիրաբերության մասին⁴²:

Ամփոփում

Հայազգի ականավոր բարերար Ալեքսանդր Թաիրյանի ծավալած գործունեությունը մեզանում պատշաճ կերպով չի լուսարանվել, իսկ պատմագիտական գրականության մեջ եղած հատուկենտ տեղեկությունները բնավ չեն ներկայացնում 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարասկզբին հայ հասարակական-քաղաքական կյանքում նրա ունեցած անվիճելի դիրքն ու ազդեցությունը: **Ալ. Թաիրյանի՝ որպես բարերարի գործունեությունը հիմնականում ընդգրկում էր կրթալուսավորական, հոգևոր, եկեղեցաշինական ոլորտները, ծանրակշիռ էր նրա ներդրումը նաև հասարակական ու տնտեսական կյանքի մյուս բնագավառներում:**

Մատենադարանի Ալ. Երիցյանի արխիվում պահվող վավերագրերը փաստում են Ալ. Թաիրյանի՝ կրթական և հոգևոր հաստատություններին տրամադրած ֆինանսական մեծածավալ օգնության մասին: Ընդ որում, Ալ. Թաիրյանը ոչ միայն գումար է փոխանցել, այլև անմիջական մասնակցություն է ունեցել կրթօջախների կառավարման գործում: Նա երկար տարիներ եղել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի հոգաբարձուների խորհրդի անդամ: Այդ ամենից զատ՝ նա մասնակցել և իր գորակցությունն է հայտնել ամենատարբեր նպատակներով հրավիրված բարեգործական ժողովներին:

Ուստի, մեր կարծիքով, Ալեքսանդր Թաիրյանի անունը պետք է դասվի 19-20-րդ դարերի հայ մեծ բարերարների՝ Մկրտիչ Սանասարյանի, Ալեքսանդր Մանթաշյանցի և այլ ականավոր դեմքե-

41 Տե՛ս նույն տեղում, վավ. 82:
42 Տե՛ս նույն տեղում, վավ. 87:

րի անունների շարքը և ստանա իր արժանի գնահատանքը մեր օրերում:

Հայկազ Ժ. Հովհաննիսյան – հեղինակ է 4 մենագրության և 70 գիտական հոդվածների: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են 19-րդ դարի հայոց պատմության հիմնահարցերը (հայ-ռուսական հարաբերություններ, Հայկական հարց և այլն):

Էլ. հասցե՝ hovhaykaz@gmail.com

Summary

THE UNKNOWN DEEDS OF A FAMOUS BENEFICIARY

Newly discovered testimonies about Alexander Tairyan in the archive of Alexander Yeritsyan

Haykaz J. Hovhannisyanyan

Doctor of Sciences in History

Key words - Alexander Tairyan, businessman, philanthropist, educational and cultural sphere, spiritual sphere, church construction, social activity, refugees, relief, discussion.

The activities of the Armenian businessman and philanthropist Alexander Tahiryanyan are not properly covered in the Armenian historiography, and scattered information about him in the historical literature does not reflect and does not characterize his undeniable influence in the Armenian social- political and economic life in the late 19th and early 20th centuries.

The article presents the main activities of Al. Tahiryanyan as a patron. These are educational, spiritual and church-construction spheres, as well as other areas of social-economic life, in which Al. Tahiryanyan invested significant contribution throughout his life.

The documents from the archives of the famous Caucasian scientist Al. Yeritsov stored in the Matenadaran - Institute of ancient manuscripts- confirm that Al. Tahiryanyan provided great financial support to educational

and spiritual centers of the Transcaucasian region. It is noteworthy that Al. Tahiryian not only transferred money to accounts of the educational centers, but also directly participated in their managing processes. For many years he was a board member of trustees of the Nersisyan School in Tiflis. In addition to all these, Al. Tahiryian participated in the meetings convened for various charitable purposes.

In our opinion, the name of Alexander Tahiryian should be put among other well-known Armenian philanthropist by receiving well-deserved recognition among compatriots.

Резюме

НЕИЗВЕСТНЫЕ ДЕЛА ИЗВЕСТНОГО МЕЦЕНАТА

Нововыявленные свидетельства об Александре Таиряне из архива Александра Ерицяна

Айказ Ж. Оганесян

Доктор ист. наук

Ключевые слова – Александр Таирян, меценат, образовательно-культурная сфера, духовная сфера, церковное строительство, общественная деятельность, беженцы, помощь, обсуждение.

В армянской историографии должным образом не освещена деятельность армянского предпринимателя и мецената XIX в. Александра Таиряна. Разрозненные сведения о нем не отражают в полной мере масштабы его огромного влияния на армянскую общественно-политическую и экономическую жизнь конца XIX-начала XX вв.

В настоящей статье представлены основные направления деятельности Ал. Таиряна как мецената: образовательная, духовная и церковно-строительная сферы, а также и другие области общественно-экономической жизни, весомый вклад в которые Ал. Таирян вносил на протяжении всей своей жизни.

Хранящиеся в Матенадаране в архиве известного кавказоведа Ал. Ерицяна документы свидетельствуют о финансовой поддержке, оказанной Ал. Таиряном учебным и духовным заведениям Кавказского края. Примечательно, что Ал. Таирян не только перечислял деньги на их счета, но и непосредственно участвовал в процессе управления образовательными учреждениями. В течение многих лет он был членом попечительского совета Нерсисянского училища в Тифлисе. Помимо этого, Ал. Таирян принимал участие в мероприятиях, проводимых в различных благотворительных целях.

По нашему мнению, имя Александра Таиряна должно стоять рядом с именами выдающихся армянских меценатов – Мкртыча Санасаряна, Александра Манташянца, и получить заслуженное признание соотечественников.

REFERENCE

1. Matenadaran, Al. Yeritsyan archive, f. 147, doc. 22-25; f. 149, doc. 134; f. 150, doc. 48, 84, 94, 153, 174, 176, 178, 181-183, 193, 196; f. 153, doc. 1, 32, 69, 71, 74-77, 81-85, 87, 89, 94, 174; f. 154, doc. 64, 70, 73, 87-88, 108, 179; f. 155, doc. 160, 163 **(In Armenian)**.